*Հավելված 3*

**Պայմանագրի կողմ**

**Արթուր Արամի Տոնոյան**
**ՀՀ, ք.Երևան,**
**անձնագիր՝ AR0507171**
**սոցքարտ՝ 1210900677**
**հաշվեհամար**
**1570030219020200**

Պատվիրատու

**ՀՀ քննչական կոմիտե**
**ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5**
**Բանկ,ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,**
**Հ/Հ 900011000834**
**ՀՎՀՀ 02631263**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«29» «07» 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
Պայմանագրի համարը՝ « »

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. Դուրս գրված N ____________________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատուցված ծառայությունների անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի | Քանակական ցուցանիշը: փաստացի | Կատարման ժամկետը: Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | Կատարման ժամկետը: փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազարդրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Թիվ 27177618 քր. գործով մասնագիտական ստուգում | | | | | | 180.000 | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչմասը և կցվում են:

**Ծառայությունը հանձնեց**

ստորագրություն

Կ.Տ.

**Ծառայությունը ընդունեց**
**ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ՝**

ստորագրություն

Կ.Տ.

*Հավելված 3.1*

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ________________-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _________________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ___________________________ -ին կնքված N ___________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | Չափման միավորը | քանակը |
| Թիվ 27177618 քր. գործով մասնագիտական ստուգում | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց՝**
Հայտը նախագծած ներկայացուցիչ՝

**Արթուր Արամի Տոնոյան**

__________________________
ազգանուն, անուն

__________________________
ստորագրություն

**Ընդունեց՝**

**ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Նարեկ Բադալյան**

__________________________
ստորագրություն

# Ո Ր Ո Շ Ու Մ

մասնագետ նշանակելու մասին

<<08>> մայիսի 2019թ.

ք.Արտաշատ

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ն.Գ.Բադալյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 27177618 քրեական գործի նյութերը.

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018թ. նոյեմբերի 12-ին Արարատի մարզի դատախազությունից թիվ 59-Դ-1/87-18 գրությամբ ստացվել է Մարետա Հասրաթյանի՝ մարզի դատախազին հասցեագրված հանցագործության մասին հաղորդումը՝ Վարդաշեն համայնքի դպրոցի տնօրեն Սոֆիա Հովսեփյանի կողմից ապօրինությունների վերաբերյալ:

Մարետա Հասրաթյանը բացատրություն է տվել, որ Վարդաշեն համայնքի դպրոցի տնօրեն Սոֆիա Հովսեփյանը նոր դպրոցի շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ յուրացրել է շինարարական ապրանքներ, ինչպես նաև հին դպրոցի մասնաշենքի քանդելուց հետո առաջացած մոտ 100 քառ.մետր տախտակ, ստրապիլ, բալկա յուրացրել է:

Դեպքի առթիվ 2018թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 27177618 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել Արարատի մարզային քննչական վարչություն:

Նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2013թ.-2018թ. ընթացքում <<Վարդաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի համար ձեռք են բերվել տարբեր ապրանքներ /համակարգիչներ, պրոյեկտորի էկրան, հեռուստացույց, ստենդներ, գրենական պիտույքներ, շինարարական ապրանքներ, լվացող-մաքրող պարագաներ/՝ ուռճացված գներով, իսկ իրականում դրանց մեծ մասը նաև գոյություն չունի: Նախակրթարանի համար խաղալիքներ և ստենդներ ձեռք բերելու համար դուրս է գրվել 8000 ԱՄՆ դոլլարին համարժեք գումար, որը յուրացվել է: Զուգարանի հորի պարունակությունը դատարկվել է դպրոցին հարակից առվի մեջ թափվելու միջոցով, սակայն դրա դիմաց գումար է դուրս գրվել:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական գիտելիքեր, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ, 12-րդ կետերի և 84-րդ հոդվածի պահանջներով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 27177618 քրեական գործով Արթուր Արամի Տոնոյանին նշանակել որպես մասնագետ:

Ավագ քննիչ՝ Ն.Գ.Բադալյան

Որոշումը ներկայացվեց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված իմ՝ որպես մասնագետի իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվեց՝ << >> 2019թ.:

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ստուգում նշանակելու մասին

<<08>> մայիսի 2019թ.

ք.Արտաշատ

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ն.Գ.Բադալյանս, ուսումնասիրելով թիվ 27177618 քրեական գործի նյութերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018թ. նոյեմբերի 12-ին Արարատի մարզի դատախազությունից թիվ 59-Դ-1/87-18 գրությամբ ստացվել է Մարետա Հաարաթյանի՝ մարզի դատախազին հասցեագրված հանցագործության մասին հաղորդումը՝ Վարդաշեն համայնքի դպրոցի տնօրեն Սոֆիա Հովսեփյանի կողմից ապօրինությունների վերաբերյալ:

Մարետա Հաարաթյանը բացատրություն է տվել, որ Վարդաշեն համայնքի դպրոցի տնօրեն Սոֆիա Հովսեփյանը նոր դպրոցի շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ յուրացրել է շինարարական ապրանքներ, ինչպես նաև հին դպրոցի մասնաշենքի քանդելուց հետո առաջացած մոտ 100 քառ.մետր տախտակ, ստրափիլ, բալկա յուրացրել է:

Դեպքի առթիվ 2018թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 27177618 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել Արարատի մարզային քննչական վարչություն:

Նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2013թ.-2018թ. ընթացքում <<Վարդաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի համար ձեռք են բերվել տարբեր ապրանքներ /համակարգիչներ, պրոյեկտորի էկրան, հեռուստացույց, ստենդներ, գրենական պիտույքներ, շինարարական ապրանքներ, լվացող-մաքրող պարագաներ/՝ ուռճացված գներով, իսկ իրականում դրանց մեծ մասը նաև գոյություն չունի: Նախակրթարանի համար խաղալիքներ և ստենդներ ձեռք բերելու համար դուրս է գրվել 8000 ԱՄՆ դոլլարին համարժեք գումար, որը յուրացվել է: Զուգարանի հորի պարունակությունը դատարկվել է դպրոցին հարակից առվի մեջ թափվելու միջոցով, սակայն դրա դիմաց գումար է դուրս գրվել:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքները պարզելու՝ պետությանը պատճառած վնասի չափը, մեղավոր անձանց շրջանակը պարզելու, նրանց արարքներին իրավական գնահատական տալու, ինչպես նաև քրեական գործով օբյեկտիվությունը, բազմակողմանիությունն ու լրիվությունն ապահովելու համար անհրաժեշտ են համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ա. Թիվ 27177618 քրեական գործով նշանակել ստուգում, որի կատարումը հանձնարարել գործով մասնագետ նշանակված Արթուր Արամի Տոնոյանին և նրա պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

1. 2013թ.-2018թ. ընթացքում <<Վարդաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ապրանքանյութական պաշարների ձեռքբերման գործընթացը համապատասխանո՞ւմ է, արդյոք, ՀՀ օրենսդրության պահանջներին, թե ոչ, եթե ոչ, ապա ո՞ր նորմատիվ իրավական ակտին հակասող գործողություն/ներ է կատարվել, ինչո՞ւմն է կայանում այդ խախտումը, ո՞ւմ կողմից է թույլ տրվել, և արդյունքում պետությանը նյութական վնաս պատճառվե՞լ է, թե ոչ, եթե այո, ապա որքա՞ն:

2. Ձեռք բերված նյութական միջոցները համապատասխանում են արդյոք գնման օրով այդ ապրանքների շուկայական գներին, թե ոչ, եթե ոչ, ապա ո՞ր ապրանքի համար է նախատեսված շուկայական գնից բարձր գին վճարվել և որքա՞ն, ընդհանուր որքա՞ն է կազմում պետությանը պատճառված նյութական վնասը:

3. 2013թ.-2018թ. ընթացքում դպրոցի կողմից լվացող-մաքրող միջոցներ ձեռք բերվել են, թե ոչ, եթե այո, ապա դրանց տեսակները և քանակը համապատասխանո՞ւմ է, արդյո՞ք, դպրոցի կարիքներին, թե ոչ:

4. 2014թ.-2018թ. ընթացքում դպրոցի կողմից շինարարական նյութեր /սալիկ, շին.սոսինձ, ցեմենտ, ավազ/ ձեռք բերվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա ե՞րբ, ի՞նչ տեսակի և ի՞նչ քանակությամբ, ինչո՞ւմն է կայանում նշված շինանյութերի ձեռքբերման անհրաժեշտությունը, դրանք օգտագործվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ նպատակով:

5. 2013թ.-2018թ. ընթացքում դպրոցի համար ի՞նչ հիմնական միջոցներ են ձեռք բերվել, դրանց տեխնիկական տվյալները համապատասխանո՞ւմ են, արդյո՞ք, ձեռքբերման փաստաթղթերին, թե ոչ, ձեռքբերված հիմնական միջոցները առկա՞ են, թե ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ պատճառով են բացակայում:

6. Նախակրթարանի համար խաղալիքներ և ստենդներ ձեռք բերվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա ե՞րբ և ի՞նչ քանակությամբ, դրանց ձեռք բերման համար որքա՞ն դրամական միջոցներ են հատկացվել:

7. Դպրոցի հաշվեկշռում գտնվող ամբողջ գույքը առկա՞ է, թե ոչ, պակաս կամ ավելցուկ առկա՞ է, թե ոչ, եթե այո, ապա ո՞ր գույքից՝ որքա՞ն:

8. 2014թ.-2018թ. ընթացքում դպրոցի կոյուղու /զուգարանի/ դիտահորերի մաքրման/դատարկման աշխատանքներ կատարվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա ո՞ւմ /անձի կամ ընկերության/ կողմից և որքա՞ն դրամական միջոց է հատկացվել:

բ. Որոշման մեջ նշված՝ որպես խախտում հայտնաբերված բոլոր հարցերի կապակցությամբ մասնագետի կողմից տրվող ակտի հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել և ներկայացնել նաև դրանք հիմնավորող փաստաթղթերը /հրամաններ, դիրեկտիվներ, նորմատիվ ակտեր, հրահանգներ և այլն/:

գ. Մասնագետին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան ստուգման ընթացքում, կմտնեն մասնագետի

դ.Անհրաժեշտության դեպքում մասնագետին տրամադրել <<Վարդաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ից առգրավված և ստուգման համար նշանակություն ունեցող փաստաթղթերի բնօրինակները, որոնք գտնվում են Արարատի մարզային քննչական վարչությունում:

Ավագ քննիչ,
առաջին դասի խորհրդական՝ Ն.Գ.Բաղալյան